ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ
«ԷՆՐԻԿՈ ՄԱՏՏԵԻ» ԱՆՎԱՆ
ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ ՓԲԸ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ШИРАКСКИЙ Р. Г. ГЮМРИ
ПОЛИКЛИНИКА ИМЕНИ
“ЭНРИКО МАТТЕ”
ЗАО

3108, Գյումրի, Շիրակացի 13
Հեռ. /374 312/ 3-31-78

3108, г. Гюмри, ул. Ширакаци 13
Հեռ. /374 312/ 3-31-78

<<ՇՄԳԷՄՊ-ՇՀԱՊՁԲ-11/16>> ծածկագրով
գնման ընթացակարգով շրջանակային
համաձայնագրեր կնքած մասնակիցների

Հարգելի Մասնակից

<< ՇՄԳԷՄՊ-ՇՀԱՊՁԲ-11/16>> ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնման ընթացակարգի շրջանակներում Շիրակի մարզի Գյումրու <<Էնրիկո-Մատտեի անվան պոլիկլինիկա>>ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նշված ապրանքները: Ապրանքի մատակարարման պայմաններն են համաձայն առաջարկված պայմանագրի նախագծի:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Շիրակի մարզ , ք.Գյումրի Շիրակացի 13 հասցեով մինչև 2014 թվականի ապրիլի 18-ին ժամը 11.00-ն:

Հայտերը կբացվեն Շիրակի մարզի Գյումրու Շիրակացի 13 հասցեում տեղակայված Գյումրու «Էնրիկո-Մատտեի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի վարչական շենքում, 2014 թվականի ապրիլի 18-ին ժամը 11.00-ն:

Հայտը ներառում է գնային առաջարկը և մասնակցի գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմումը: Հայտն անրաժեշտ է ներկայացնել << ՇՄԳԷՄՊ-ՇՀԱՊՁԲ-11/16>> գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանությամբ ապահովման և /կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթերը և /կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և /կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագիրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները.
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքված մասնկիցներին պատվիրատու կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝

  հղում կատարելով ՀՀ նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և /կամ տվյալները:

ՇՄ ԳՅՈՒՄՐՈՒ <<ԷՆՐԻԿՈ-ՄԱՏՏԵԻ ԱՆՎԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ>> ՓԲԸ ՏՆՕՐԵՆ՝ Գ.Մ.ԱԴԱՄՅԱՆ

07.04.2014